

պացոյցն էր օրէնսդիր և կատարող իշխանութիւնների ներկայացուցիչների եռանդուն մասնակցութիւնը ժողովին: Ժողովում նախագահում էին դեպուտատների պալատի և սենատի նախագահները, իսկ առաջին նախարարը նստել էր պատուաւոր նախագահ կարգինալ Մերսիէի մօտ:

Ճառախօսների թւում կային և նախարարներ, ժողովը բացուեց կարգինալ Մերսիէի ճառով, որը ամենից առաջ հրաւիրեց ներկայ եղողներին ձայնակցել «կաթօլիկական» ողջոյնին. «Փառք Յիսուսի Քրիստոսին», և բացաւ անշուքեանը «կեցցէ պապը, կեցցէ Պիոս Ժ, «vive le papa, vive Pie X». Մասնակցողները մօտ 5 հազար հոգի էին: Ժողովի հինգ բաժանմունքներում կարգացուել են մինչև 500 զեկուցումներ, զանազան խնդիրների մասին, որոնք վերաբերում են կրօնին, բարոյականութեան, բարեգործութեան, տնտեսական հասարակական դրութեան, մամուլին, գիտութեան, գեղարուեստին, գրականութեան, ևլն: Ընդհանուր ժողովներում խօսում էին այն յառաջադիմութեան վերայ որ արել է Բելգիան քառօրդ դարում. և երկրի բարգաւաճումն վերագրում էին կաթօլիկների իմաստուն կառավարութեան միասիրտ գործունէութեանը: Չանազան անձինք զանազան կենսական խնդիրների մասին խօսեցին. իսկ Լօրենց Եանսենսը՝ քրիստոնէական գեղարուեստի մասին: Հանդէսները վերջացան փառահեղ թափօրով, որին մասնակցում էին 70 հազար հոգի եկած յատկապէս պետութեան զանազան կողմերից դրօշակներով և խաչվառներով:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

— Վիսրադենում օգոստոսի վերջին տեղի ունեցաւ գերման պատօրների ընկերակցութեան ժողովը: Ընկերակցութեան պրուսական ներկայացուցիչների ժողովում սկզբում կարգացուեցին զեկուցումներ հոգեւորականութեանը օգնելու համար դրամագլուխ կաղմելու, և եկեղեցական բարեգործութիւնը կարգաւորելու մասին,

գլխաւորապէս ուշադրութիւն դարձնելով, որ եկեղեցին գործի առողջների օգտին և ոչ աղքատների ու հիւանդների, — աւետարանական եկեղեցուց հեռացողների համար, և ինչ Պրուսիայում, ինչպէս երևում է, 1908 թուին աւետարանական եկեղեցուց հեռացել են 14684 հոգի, որոնցից 5212-ը Բերլինից: Ընդհանրապէս, նկատուում է, որ դաւանափոխութիւնը տեղի է ունենում մեծ մասամբ մեծ և վաճառաշահ քաղաքներում: Վերջին նիստին, որին կարող էին ներկայ լինել բոլոր պատուօրները, (իսկ դրանց թիւը այժմ 11475 է), կարգացուեց և քննութեան առնուեց պատուօր Տիլէի բեֆերատը, թէ ներկայումս, պատուօրական պաշտօնը կարող է գոյութիւն ունենալ:

Տիլէն բացասական եզրակացութեան է գալիս, ի նկատի ունելով այժմեան հակառակ վերաբերմունքը դէպի պատուօրական պաշտօնը, և այդ տեսակի շարժումն «հեռու պատուօրութիւնից», որը նկատուում է անտարբեր ու կեանքի նոր հասկացողութեան հետեւողների և ազանդաւորների մէջ:

Պատուօրական պաշտօնի որ և է արտաքին հեղինակաւորութիւն ինքն էլ չի ընդունել, չի համարել այն Քրիստոսից հաստատուած կամ Աստուածային ուխտ. բայց նա պնդում է, որ այդ պաշտօնը հասարակութեան մէջ տեսւմ է և նրա կրողների բոլոր մեղաւորութեամբ հանդերձ պաշտօնում է եկեղեցու լաւագոյն ժամանակներից մնացած բարիքը: Ինչ բանով աւելի լաւ կը լինի փոխանակել այն՝ դեռ յայտնի չէ. պատուօրութիւնը անհրաժեշտօրէն դեռ պէտք է շարունակուի, որովհետեւ, Աստուածային յայտնութիւնը պատմականօրէն է կատարւում, դրա համար էլ մեկնողներ պէտք են. 2, Սուրբ Գիրքը առանց աստուածութեան, այսինքն, առանց գիտնական բացատրութեան չի կարող լինել հասարակաց կեանքի աղբիւր, 3, քրիստոնէութիւնը պէտք ունի եկեղեցական շաղկապի, որպէս զի ապահովի հաւասարաշափ և լիովին հոգատարութիւն իւր անդամների մէջ: Պաշտօնի այսպիսի պարտաւորութիւնների մասին կարելի է ասել

որ նրանք ունին Աստուածային ուխտ ինչպէս ամեն գործ,
որ կատարուում է Աստուծուն ծառայելու համար: Բայց
այս պաշտօնէութեան ձեռնշանակութիւն չունի:

Տիլէի այս առաջ բերուած զեկուցումն իւր վերայ
դարձրեց ոչ միայն բողոքականներին, այլ և կաթօլիկներին
ուշադրութիւնը:

Թէ բողոքական պատօրները տարակուսում են իրանց
դոյութիւն ունենալու իրաւունքի մասին, այդ յամենայն
դէպս մի բաւական նշանակալից փաստ է, որի մէջ կա-
րելի է տեսնել բողոքական եկեղեցու քայքայման նշան-
ներից մէկը: Այդ զգալի էր ժողովումն էլ, և Տիլէին հա-
կաճառօղները շտապում էին ընդդիմաբանել նրան, որ
նրա յօռետեսութիւնը հիմք չունի այժմեան եկեղեցու
վերաբերութեամբ:

— Բրեմենում սեպտմ. 21—24 ն. տ. տեղի ունե-
ցաւ դերման ազատամիտների բողոքական ընկերութեան
ԻԴ. ժողովը, որ ցանկանում էր վերանորոգել եկեղե-
ցին, ազատելով նրան «հնացած» վարդապետութիւններից
ու հաստատութիւններից և ամրացնելով նրա մէջ կրօ-
նական կեանքը:

Ժողովին առաջարկուած զեկուցումները նուիրուած
էին եկեղեցու ու կրօնքի՝ ժամանակակից հասարակական
— քաղաքական և հոգևորական կեանքի հետ ունենալիք
յարաբերութեան ամենակարևոր խնդիրներին: Յայտնի
Փրիդրիխ Նաումանը խօսեց թէ կրօնական ազատամտու-
թիւնը ինչ վերաբերմունք պէտք է ունենայ դէպի քաղա-
քականութիւնը, արծարծելով այն միտքը, թէ ազատամիտ
— քաղաքական կուսակցութիւնները չը պէտք է կաշկանդուեն
դաւանաբանական և փիլիսոփայական սկզբունքներով, այլ
պէտք է պաշտպանեն քաղաքացիական ազատութեան
և հաւասարութեան սկզբունքը, և կրօնասէր ազատամիտ
խմբերից պահանջեն նոյնպէս յարգանք դէպի մարդկայ-
նութիւնը և անձնաւորութեան իրաւունքները, որովհետև
այդ ինքն ըստ ինքեան կառաջնորդի դէպի յաղթանակը
ընդդէմ պահպանողական և կղերականութեան խնամա-

կալութեանն Եղան ոմանք, որոնք խօսեցին բողոքական եկեղեցում՝ գեղարուեստական տարրը, որպէս հրապուրող միջոց, զօրեղացնելու մասին. այն է, պատկերներ, արձաններ, և այլն. ժամանակակից նիւթի վերայ խօսեց պատուար Կեօնիզն էլ, մի քանիսի հակառակ ապացուցանելով, որ գեղարուեստը չի կարող փոխարինել կրօնին. Շատ կարևոր հարց զարթեցրեց պատուար Ալֆրիդ Ֆիշերը իւր գեկուցման մէջ այն մասին, թէ ինչ պէտք է անել որ ժողովուրդը եկեղեցուց չը հեռանայ: Ներկայումս ժողովրդի հակակեղեցական (բաց ոչ հակաքրիստոնէական) տրամադրութիւնը, որ նկատուում է, նա բացատրում է մասամբ՝ զարդիս տիրապետող նիւթապաշտական աշխարհահայեացքով, մասամբ՝ եկեղեցու՝ յետադիմականների հետ դաշնակցութեամբ, թէև միևնոյն ժամանակ յայտնապէս խոստովանում է, որ բողոքականութեան նոյն իսկ սկզբունքի մէջ կենդրոնացած է անհատականութիւնը, այսինքն, ոչ-եկեղեցականութիւնը, և թէ Լուտերի օրից սկսած արդէն եկեղեցին դիակնացել է և նրա տեղ բռնել է կրօնը. ժողովրդին դէպի եկեղեցի տրամադրելու համար գեկուցանողի կարծիքով, պէտք է զարգացնել կրօնական կեանքը, չպէտք է վախենալ ժամանակակից, և յատկապէս սօցիալական հարցերից, եկեղեցական ամբիօնների վերայ աւելի շատ տեղեր պէտք է տալ ժողովրդին: Պատուար Տրաուբը կարդաց գեկուցումն քրիստոնէական և «ժամանակակից» այսինքն, եկեղեցուց և յերարխիայից ազատ, էտիկայի մասին: Ժողովը առաջադրուած հարցերից մի քանիսի մասին եզրակացութիւնը ընդունեց: Այսպէս օրինակ, նա մերժեց Պրուսիայում ծրագրող դատարանը հոգիօր անձանց վերայ հաւատոյ գործի մասին, որպէս բոլորովին հակաաւետարանական ճնշումն գիտութեան ազատութեան վերայ, և միացաւ Ռէյնալդի և Վեսֆալիայի աւետարանական ազատութեան բարեկամների ընկերութեանը, որ կամենում է աստուածապաշտութեան ժամանակ առաքելական հանդանակի պարտաւորական կիրառութիւնը փոխել: